9496
№ 237

ԱՐՄԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՈՐԻՑՈՆ
ՊԵՏ. ՕՐԻՆԱՑ

ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ

Կենսագրական ակնարկ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԻ ԽՈՒՄԲ ՀԱՄԵՍՏԱՑՈՂՆԵՐԻ

ԹԻՖԼԻՍ
Էյնֆարտատ տպ. տր. Դ. Աղանեանցի Պօլիս. 7.
1911

281.6գ.
Մ-64 գ.

281.6գ.
Մ-64ա.
4 NOV 2008
25 FEB 2013
ՀՈՐԻՈՆ
ՀՈՐԻՈՆ
920
Կ-79
1005
22222

ԱՐՄԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ

Կենսագրական ակնարկ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԻ ԽՈՒՄԲ ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐԻ

ԹԻՖԼԻՍ
Էլեմտրաւարդ տպ. օր. Ղ. Աղաճանեանցի Պօղոս. 7.
1911

26 FEB 2013

9496



ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ

Կաթողիկոսական թեկնածուների շարքում առաջնակարգ տեղ է գրաւում Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեանը։ Նա մեր այն կրթուած հոգևորականների թւին է պատկանում, որոնք յարատև գործունէութեան զարմանալի եռանդով լցուած, երբէք չեն թմբկահարել ու աշխարհին իրենց գործունէութիւնը ցոյց տալու սին փառքով լցուած չեն եղել։ Այդ պատճառով է, որ մեր երիտասարդ կրթուած հոգևորականների շարքում աւագագոյնը լինելով ըստ տարիքի և ամենագործունեան հանդիսանալով, ամենից քիչ է խօսել աւել իր մասին։ Այնուամենայնիւ նրա գործերը պատմութեան սեփականութիւն են դարձել, թէև դեռ չհրատարակուած ու հասարակութեան լայն խաւերի սեփականութիւն չդարձած։ Սակայն նրա համառօտ կենսագրականն էլ բաւական է համոզելու հայ հասարակութեանը, որ այս անձնաւորութիւնը թէ իր պատրաստականութեամբ, թէ վարչական ընդունակութեամբ և թէ մեր անցեալի խոր գիտակցութեամբ մի-անգամայն արժանի է բազմելու այն գահին, ուրի հոգսով զբաղուած է հայութիւնը այժմ։ Աւե-

լացնենք սրան, որ Մեսրոպ եպիսկոպոսը իր այս բոլոր արժանիքների հետ ունի այն առաւելութիւնը ևս, որ ժողովրդական սկզբունքների ամենայամառ կողմնակից է, որ ապացուցել է ոչ թէ ճառերով ու յօդուածներով, այլ գործնական քայլերով։ Փաստերի թեթև յիշատակութիւնը միայն բաւական է ցոյց տալու, որ մեր յիշած առաւելութիւնները, նրա հասցէին շռայլած ածականներ չեն, այլ նրա անբաժան յատկութիւնները։ Դրա համար էլ ուղղակի կանցնենք Մեսրոպ եպիսկոպոսի գործունէութեան համառօտ պատկերին։

I

Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեանը ծընուել է 1865 թուին, Տաթևի վիճակի Շիկահող գիւղում։ Շուշու թեմական դպրանոցում սովորելուց յետոյ տեղափոխուեց Թիֆլիզ և աւարտելով Ներսիսեան դպրանոցը, 1885 թուին ստացաւ 7-րդ դասարանի վկայական—այդ ժամանակ Ներսիսեան դպրանոցը բացի վեց դասարանեան դասընթացքից ունէր նաև լրացուցիչ 7-րդ դասարան՝ մանկավարժական, հոգեբանական և այլ մասնագիտական ճիւղերով։ Այսպիսով Մեսրոպ եպիսկոպոսը իր սկզբնական և միջնակարգ կրթութիւնն ստացաւ հայկական հողի վրայ և իր ժամանակի ամենալաւ միջնակարգ դպրանոցում։ Սակայն նա չբաւականացաւ հայկական

կրթութեամբ և պատրաստուելով ռուսական գիմնազիոնի ծրագրով, գնաց Ռևել և քննութիւն տալով ձեռք բերեց գիմնազիայի վկայական, որով և հնարաւորութիւն ստացաւ մտնել համալսարան։

Հայ գրական ու հասարակական կեանքի մէջ այնպէս խոշոր դեր խաղացած Դորպատը դէպի ինքը քաշեց պատանի Մեսրոպին և նա մտնելով Դորպատի համալսարանը, իբրև մասնագիտութիւն ընտրեց լեզուագիտական ճիւղը (կլասիքական լեզուների)։ Համալսարանի լրիւ դասընթացն աւարտեց 1891 թուին և իբրև աւարտական շարադրութիւն գրեց յունական հընագիտութեան մասին։ Նրա այս շարադրութիւնն այնքան յաջող էր, որ նա ստացաւ ոսկէ մեդալ։ Չորս տարի սովորեց համալսարանում՝ առաջին տարին Սանասարեանի հաշուով, իսկ վերջին երեք տարին Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան միջոցներով։

Սակայն այս կրթութիւնն էլ չի յագեցնում երիտասարդ Մեսրոպի ուսման ծարաւը, և նա ձգտում է արտասահմանեան կրթութիւն ևս ձեռք բերել։ Դրա համար նա 1891 թուին Դորպատից գնաց Վիեննա և 8 ամիս շարունակ թէ համալսարանի դասախօսութիւններին յաճախեց և թէ պարապեց այնտեղի գրադարանի ուսումնասիրութեամբ։ Այդտեղից գնաց Պարիզ, բայց երկար չկարողացաւ մնալ և հրաւէր ստանալով ճե-

մարանի տեսուչ Արիստակէս եպիսկոպոս Սեդ-
բակեանից, 1892 թ.-ին վերադարձաւ Էջմիածին
և ստանձնեց հայագիտական առարկաների դա-
սատուի պաշտօն։ Ձնայելով իր բարձր կրթու-
թեանն ու ուսուցչական ասպարէզում ցոյց տը-
ւած հմտութեանը, Մեսրոպ եպիսկոպոսը թողեց
շուտով այդ ասպարէզը։ Ինչպէս յայտնի է, այդ
ժամանակ կրթւած հոգևորականների մեծ պա-
հանջ էր զգացւում, մանաւանդ որ աշխարհա-
կան ինտելիգենցիան գործունէութեան լայն ու
ազատ ասպարէզ չունէր։ Մի տարի ուսուցչու-
թիւն անելուց յետոյ նա հրաժարւեց այդ պաշ-
տօնից և 1893 թ.-ի մայիսին ձեռնադրւեց վար-
դապետ, 1894 թ.-ին գնաց մասնակցելու Ինս-
պրուգում գումարւած անտրոպոլոգների կոնգրէ-
սին և ծնևում տեղի ունեցած օրիենտալիստնե-
րի կոնգրէսին։ Օգտւելով իր 6 ամիս տևող այդ
ճանապարհորդութիւնից, Մեսրոպ վարդապետը
աշխատեց ծանօթանալ Պարիզի, Լոնդոնի և Բեռ-
լինի հռչակաւոր մատենադարանների հետ և մաս-
նաւորապէս ուսումնասիրել արևելագիտութեանը
վերաբերող ճիւղերը։

Ինչպէս յայտնի է, 1895-ին Գոլիցինի
ժամանակ փակւեցին մեր եկեղեցական-ծխա-
կան դպրոցները։ Սակայն Երևանի թեմում
բաւականաչափ դպրոցներ բաց էին մնացել
ծրագրական որոշ տարբերութեան շնորհիւ.
ահա այդ դպրոցներին ընդհանուր տեսուչ նը-

շանակւեց Մեսրոպ վարդապետը Եւրոպայից
վերադառնալուց յետոյ. դժբախտաբար հետևեալ
տարի այդ դպրոցներն էլ փակւեցին և տեսչու-
թեան պաշտօնը վերացաւ։ 1896 թ.-ին նշանակ-
ւեց Շուշու թեմական դպրոցի տեսուչ, բայց
կղերական բանակի ոտնձգութիւնների շնորհիւ մի
տարուց յետոյ կաթողիկոսը հրաժարեցրեց նրան
այդ պաշտօնից։ Այս բանն այնպէս վատ ազդեց
ազատամիտ բանակի վրայ, որ հասարակական
կարծիքի ազդեցութեան տակ հոգաբարձական
կազմն էլ հրաժարական տւեց տեսչի պատճա-
ռով։

Այնուհետև Մեսրոպին մնում էր մի որևէ
գաւառական անկիւնում յաջորդի կամ գործա-
կալի համեստ պաշտօնի մէջ ամփոփել իր ամ-
բողջ գիտութիւնը։ Նրան նշանակեցին Շամախու
թեմի կոնսիստորիայի նախանդամ. սակայն այդ
պաշտօնը նրա գործունէութիւն որոնող հոգուն
բաւականութիւն չէր տալիս։ Եւ տարին լրացնե-
լով հրաժարւեց իր պաշտօնից ու նորից իր պատ-
րաստւելու, հիմնաւոր գիտութիւն ձեռք բերելու
յետեւից ելաւ։ Այդ նպատակով նա ուղևորւեց
Պետերբուրգ, պատրաստւեց և 1902 թ.-ին դիս-
երտացիա պաշտպանելով արևելեան ֆակուլտե-
տում, ստացաւ մագիստրոսական աստիճանի
տիտղոսը։ Չը մոռանանք յիշել այստեղ, որ այդ
աստիճանին պատրաստւելու ընթացքում նա նը-
պաստ ստացել է Ադ. Մանթաշեանից, Հ. Մելի-

քեանից և Պետերբուրգի եկեղեցական խորհրդից։

Այսպիսով մագիստրոսական տիտղոսն ստացած Մեսրոպ վարդապետը նորից վերադարձաւ Էջմիածին, նոր եռանդով, գործունէութեան նոր ու լայն ասպարէզի վառ յոյսերով։ Բայց այդ ժամանակ, ինչպէս յայտնի է, Էջմիածնի կղերամիտ մասը բոլոր գործերն իր ձեռքն էր առել և քիչ թէ շատ ազատամիտ հոգևորականին հալածում էր անխնայ կերպով։ Ժամանակի ոգին մի կողմից, տիրող Գալիցինեան ռեժիմը միւս կողմից պահպանողական խաւարամիտ բանակին թև ու թիկունք էին տալիս։ Եւ Խրիմեանի նման ազատամիտ ու ամբողջ հոգով ժողովրդական մարդն անգամ անկարող էր դիմադրել այդ արտաքուստ ու ներքուստ եկող հոսանքներին և ընդհակառակը իրեն անկարող զգալով այդ յախուռն դիմադրութեան դէմ, նա իր թիերը ցած դրեց և նաւը յանձնեց բախտի ալիքներին։ Ազատամիտ հոգևորականների ու դաղափարների հալածանքը իր ասպիճանի դաղաթնակէտին հասաւ։

Եւ բնական է, որ ամենամեծ թշնամանքների ու հալածանքների զոհերից մէկն էլ Մեսրոպ վարդապետը պիտի լինէր. որովհետև իր լուսաւոր դաղափարների հետ ունէր նաև մեծ պատրաստականութիւն։ Իսկ «թշնամին» ամենից շատ պատրաստուած «թշնամուց» է զարհուրում։ Խաւարամիտ բանակը ամենից շատ Արիստակէսնե-

րից ու Մեսրոպներից պիտի վախէր ու նրանց դէմ լարէր իր ճիգերը։

Եւ Արիստակէսի նման, Մեսրոպն էլ հալածուեց։ Նրան վանքում, թեմերում, դպրոցներում իր գիտութեան ու ուժերին համապատասխան ոչ մի պաշտօն չտուին։ Բայց ճրագը ծածկոցի տակ չի կորցնի իր լոյսը և ոչ էլ խոշոր ընդունակութիւնը կը ոչնչանայ խոչընդոտների հանդէպ։ Այս հալածանքը դուցէ մի ուրիշին ոչնչացնէր ու կեանքի մէջ անհետ կորցնէր, բայց Մեսրոպի պէս պատրաստուած մարդու և ուժեղ բնաւորութեան համար գործունէութեան մի լայն ու փառաւոր ասպարէզ բաց արաւ։

II

Դեռ 1893 թուին, երբ ազատամիտ բանակը հրճուանքի մէջ էր կաթողիկոսական ընտրութեան ժամանակ տարած իր յաղթանակի պատճառով, երբ հայ ժողովուրդը ցնծագին յոյսերով սպասում էր տեսնել իր նոր ընտրեալ Հայրիկին, և տեղապահ Երեմիա եպիսկոպոսի կարգադրութեամբ Էջմիածնից պատուիրակներ ուղարկուեցին Երուսաղէմ, մեծ աքսորեալին այնտեղից հրաւիրելու դէպի Լուսաւորչի գահը, այդ պատուիրակութեան մէջ էր նաև ազատամիտ Մեսրոպը։ Խրիմեանը պիտի Ռուսաստան մտնէր և Էջմիածին դար Եւրոպայի վրայով, որովհետև Հոմիդի ատելի աքսորականը անկարող էր Պոլիս

մանել, թէկուզ նա լինէր մի ամբողջ ժողովրդի ընտրեալն ու ներկայացուցիչը։

Պատրիարքները գնացին Երուսաղէմ, և Խրիմեանին վերցնելով, Եգիպտոսի վրայով ուղևորուեցին դէպի Եւրոպա, և Աւստրիայի մայրաքաղաքով անցան Ռուսաստան։ Պատրիարքների շարքում առանձնապէս աչքի ընկաւ Մեսրոպ վարդապետը, որ Խրիմեանի թարգմանի պաշտօնն էր կատարում։

Այս հետաքրքիր ճանապարհորդութեան ընդարձակ նկարագրութիւնը գրել և հրատարակել է նոյն Մեսրոպ վարդապետը, որ յիշելով ճանապարհորդութեան բոլոր մանրամասնութիւնները, միաժամանակ իր գրքին տուել է գեղարուեստական յուշատետրի բնաւորութիւն, որով և գիրքը մինչև այսօր էլ ընթերցանութեան թարմ նիւթ է։

Այնուհետև յաճախ Մեսրոպ վարդապետը Խրիմեանին իբրև թարգման, ուղեկցել է պաշտօնական այցելութիւնների ժամանակ. իսկ 1901 թ-ին, երբ կատարւում էր Վրաստանի միացման հարիւրամեակը Ռուսաստանի հետ և որտեղ կայսեր ներկայացուցիչն էր Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչը, Մեսրոպ վարդապետը Խրիմեանին ուղեկցեց Թիֆլիզ իր նոյն պաշտօնով և բոլոր փոխադարձ այցելութիւնների ժամանակ նրա թարգմանն էր։ Եւ Խրիմեանը տեսնում էր թէ երիտասարդ վարդապետը որքան լրջութեամբ ու վարպետութեամբ կարողանում է կատարել

այդ ծանր ու պատասխանատու պաշտօնը։ Մենք այդ պաշտօնը—կաթողիկոսի թարգմանի պաշտօնը—անուանում ենք ծանր ու պատասխանատու, որովհետև այն օրից, երբ Էջմիածինը Ռուսաստանի իշխանութեան տակ է մտել, հայ կաթողիկոսները ուղղակի խաղալիք են դարձած եղել իրենց պարտականութիւնը չհասկացող կամ ապիկար թարգմանների ձեռքին։ Դեռ Ներսէս Աշտարակցին 70—80 տարի սրանից առաջ զգուած այդ թարգմանիչների անկարողութիւնից, ծերութեան հասակում ստիպուած սովորեց ռուսաց լեզուն, որպէսզի կարողանայ իր մտքերը իսկութեամբ յայտնել կառավարութեան ներկայացուցիչներին պաշտօնական այցելութիւնների ժամանակ։ Եւ ահա Խրիմեանը, որ ոչ միայն ռուսաց լեզուին էր անծանօթ, այլ և ռուս կեանքին ու քաղաքականութեանը անտեղեակ, Մեսրոպ վարդապետի մէջ տեսնում է այն անձնաւորութիւնը, որին կարող էր ամբողջովին վստահել իր իսկական մտքերը հաղորդելու համար կառավարչական պաշտօնեաներին։

Սրա շնորհիւ էր նաև, որ դեռ 1896 թ-ի Ն. Կ. Մ. Նիկողայոս Բ. Կայսեր թագադրութեան ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Երեմիա եպիսկոպոսի հետ Պետերբուրգ գնաց թարգմանի պաշտօնով նաև Մեսրոպ վարդապետը։

Այդ բոլոր ճանապարհորդութիւնների և այ-

ցելութիւնների ժամանակ, Մեսրոպ վարդապետը իբրև խելահաս քաղաքագէտ ու վստահելի թարգման այնպէս նշանակալից դարձաւ Խրիմեանի աչքում, որ վշտահար ու յուսաբեկ կաթողիկոսը միակ յարմար անձնաւորութիւն Մեսրոպ վարդապետին գտաւ Պետերբուրգ ուղարկելու, հայ ժողովրդի ամենացաւոտ խոցի բժշկութեան համար։ Դա դպրոցների վերաբացման և գրաւուած եկեղեցական կալուածների վերադարձման խնդիրն էր, որ այնպէս ծանր կապարի պէս նստել էր հայ ժողովրդի սրտին և նրա համար նոր տառապանքների դուռն էր բաց արել։ Մեսրոպ եպիսկոպոսը 1904 թ-ի դեկտեմբերին ուղևորուեց Պետերբուրգ և այդ ամսից մինչև յաջորդ տարուայ մայիսը անդուլ աշխատանք թափեց կալուածների վերադարձը և դպրոցների վերաբացումը յաջողեցնելու համար։

Եւ իզուր չէին Խրիմեանի յոյսերը։ Մեսրոպը նախ քան պաշտօնական անձնաւորութիւններին տեսնելը, խորագէտ քաղաքականութեամբ աշխատեց մայրաքաղաքի հասարակական կարծիքը մշակել յօգուտ հայ ժողովրդի դատի։ Նա գիտէր թէ ինչ դեր է խաղում պահպանողական և յետադէմ մամուլը ժամանակակից բարձր շրջանների վրայ, ուստի իր բոլոր ուշքը դարձրեց այդ ուղղութեամբ։ Նա յարաբերութիւններ հաստատեց բարձր շրջանների միաքը ղեկավարող մամուլի ներկայացուցիչների հետ, պարզեց նրանց

հայ ժողովրդի իսկական դրութիւնն ու վերաբերմունքը դպրոցների փակման և կալուածների գրաւման հանդէպ։ Աշխատեց համոզել, որ հայ դպրոցների փակումով ոչ միայն հայ ժողովուրդը, այլև պետութիւնը մեծապէս վնասւում է, հազարաւոր մանուկներ վայրենի մեծացնելով։ Փաստերով ու մանրամասն հաշիւներով կարողացաւ նոյն իսկ օտարակերմամուլի ղեկավարներին ցոյց տալ, որ հայ եկեղեցական կալուածները ոչ միայն պետական բիւջէի տեսակէտից մի չնչին գումարի արդիւնք են ներկայացնում, այլև իրենց գոյութիւնը հազիւ պահպանելով, անկարող են կողմնակի նպատակների ծառայել։ Այս տանջալից նախապատրաստութիւնից յետոյ միայն Մեսրոպը սկսեց իր պաշտօնական այցելութիւնները պետական շրջաններին։ Եւ վերջապէս նրա աշխատանքը ի զուր չանցաւ, կառավարութիւնը զիջեց և կալուածների հետ եկեղեցական-ծխական դպրոցները ևս կարճ ժամանակից յետոյ վերադարձուեցին հայ ժողովրդին։

Կառավարութիւնը եկեղեցական-ծխական դպրոցները վերադարձրեց այն պայմանով, որ Կովկասեան փոխարքայի և կաթողիկոսի փոխադարձ համաձայնութեամբ կանոններ մշակուեն և և դպրոցները այդ կանոններով ղեկավարուեն. Խրիմեանը յատուկ կոնդակով մի յանձնաժողով նշանակեց, որը պիտի կանոններ մշակէր և ներկայացներ Փոխարքային։ Բնական է, որ Մեսրոպ

բոպ վարդապետը պիտի գտնուէր անշուշտ այս յանձնաժողովի մէջ, քանի որ վերաբացուած դպրոցների գործը նրա սրտին չափազանց մօտ էր, որովհետև այդ դպրոցների վերադարձման ժամանակ բոլոր դառնութիւնները նա ճաշակել էր։ Բայց հէնց այդ ուրախութեան ու հրճւանքի թւականին էր, որ կովկասահայի ժամանակաւոր ժպիտը յանկարծ քարացաւ, և այդ դժբախտ ժողովրդի համար սկսեցին սոսկումի ու զարհուրանքի օրեր։ Սկսեցին թուրք-հայկական ընդհարումները. հայերը չէին կարող դպրոցների վայելումով զբաղուել, դպրոցական խնդիրը ոչ միայն իր սրութիւնը կորցրեց, այլև այժմէութիւնը։ Մեսրոպի հայրենասէր սիրտը չէր կարող այդ սարսուռների հանդէպ լուռ ու անտարբեր նստել և կաբինետային աշխատանքով զբաղուել, մանաւանդ որ ահաբեկուած վայրերը նրան կանչում էին։ Ժողովրդական կսկիծն այնքան մեծ էր, որ եղած ձեռքերը օգնութիւն հասցնելու անհնարինութեան էին մատնուած։ Ժողովրդին մխիթարելու, նրա կսկիծներն սփոփելու և մանաւանդ կառավարութեան ուշքը նրա վրայ դարձնելու համար հարկաւոր էին բազմաթիւ անձնազոհ ու խելահաս ձեռքեր։ Այդ էր պատճառը, որ չնայելով Կարապետ ու Թովմա վարդապետների ներկայութեանը, Հին-Նախիջևանի ժողովուրդը խնդրեց կաթողիկոսից Մեսրոպին ևս ուղարկել այնտեղ։ Չնայելով Կարապետ

վարդապետի եռանդուն գործունէութեանը, Նախիջևանի ժողովուրդն զգում էր նաև Մեսրոպի պէս մի անձնաւորութեան ներկայութեան պահանջը, որ անցեալում բաւականաչափ ապացոյցներ էր տուել արդէն խելացի քաղաքականութեան։

Եւ Մեսրոպը մի բոպէ մոռացած դպրոցական խնդիրը, շտապեց Նախիջևան և ամբողջովին նուիրուեց ժողովրդի սփոփանքի ու ապահովութեան գործին։ Նա մնաց այդտեղ մինչև 1906 թւի կէսերը, որից յետոյ անցաւ իր հայրենի Զանգեզուրի շրջանը և մինչև նոյն թւի վերջերը մնաց Զանգեզուրում։ Այդ ժամանակւայ թերթերում և մասնաւորապէս «Մշակի» էջերում նկարագրուած է Մեսրոպ վարդապետի սրտացաւ ու հայրախնամ գործունէութիւնը այդ սև օրերում։ Մեսրոպը այս ասպարէզում էլ ցոյց տուեց, որ ինքը որքան ժողովրդի տառապանքներով տոգորուելու զգայուն սիրտ ունի, նոյնքան և առողջ ու խելահաս միտք ունի պետական պաշտօնեաների հետ մի խելացի յարաբերութիւն մշակելու համար։

Այսպիսով Մեսրոպ վարդապետը իր վրայ դրուած բոլոր ժամանակաւոր յանձնարարութիւնները կատարեց օրինակելի ճշտապահութեամբ և իր պարտականութիւնը խորապէս գիտակցող մարդու անձնուիրութեամբ. այստեղից էլ մեր հոգևոր բարձր շրջաններում կազմուեց այն համոզմունքը, թէ ռուս կառավարութեան հետ պաշ-

տօնական յարաբերութիւնները վարելու համար յարմարագոյն անձնաւորութիւնը Մեսրոպ վարդապետն է։ Եւ գիտնական վարդապետը դարձաւ Էջմիածնայ դիւանի՝ այսպէս ասած՝ «յատուկ յանձնարարութիւնների պաշտօնեան» ու Էջմիածնի ներկայացուցիչը պետութեան առաջ։

Եթէ աչքի առաջ ունենաք, որ Էջմիածինը ամենից առաջ մի պաշտօնական վայր է, որը ամեն օր թարմ յարաբերութիւն պիտի պահպանէ կառավարչական ատեանների հետ, եթէ աչքի ունենաք, որ Էջմիածինը ամենից առաջ միակ ներկայացուցիչն է հայ հոգևոր և ազգային —կուլտուրական մի շարք գործերի, այն ժամանակ մեզ համար հասկանալի կը լինի, թէ ինչպիսի պարտականութիւններ կան դրուած Էջմիածնի ներկայացուցիչը հանդիսացող այդպիսի անձնաւորութեան վրայ։ Բոլոր պաշտօնական յարաբերութիւնները, ճիշտ է, սինոդը և թէ մանաւանդ կաթողիկոսը պիտի ունենան իրենց յատուկ ներկայացուցիչը։ Մի քանի անգամ նոյնիսկ հարց է բարձրացել՝ սինոդն է պահպանում, սակայն թէ Պետերբուրգում կաթողիկոսի յատուկ ներկայացուցչութեան պաշտօն հիմնելու վերաբերմամբ։ Այս կարևոր պաշտօնը վերջին տարիներում կատարել է Մեսրոպ վարդապետը և, ինչպէս յիշեցինք, շարունակ պատուով է դուրս եկել իր պարտականութեան տակից։ Արիմեանի մահից յետոյ. Գէորգ ս. Սուրէնեանի

առաջին տեղակալութեան օրով, Իզմիրլեան Կաթողիկոսի ժամանակ և մինչև այսօր էլ այդ պաշտօնը բացառապէս կատարում է Մեսրոպ սրբազանը։

Այսպէս՝ 1908 թ-ին, երբ եկեղեցական-ծխական դպրոցների կանոնադրութեան մշակման հարցը նորից հրապարակ եկաւ, տեղակալ Գէորգ սրբազանի կարգադրութեամբ Մեսրոպ վարդապետը ևս մտաւ կանոններ մշակող յանձնաժողովի մէջ։ Դժբախտաբար այս յանձնաժողովը չկարողացաւ ընդհանուր համաձայնութեան գալ և Մեսրոպն ստիպուած եղաւ հրաժարուել անդամութիւնից։

Նոյն թ-ին Մեսրոպ վարդապետը տեղակալի կողմից կարգուեց իբրև պատուիրակ և թարգման նորընտիր Իզմիրլեան հայրապետին Պոլսից Պետերբուրգ և Պետերբուրգից Էջմիածին ուղեկցելու համար։ Իսկ 1909 թ-ին կաթողիկոսի կողմից ներկայացուցիչ նշանակուեց Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևչի թաղմանը ներկայ լինելու համար։

Այս ճանապարհորդութիւնների և շփումների ընթացքում Իզմիրլեան վեհափառը կարողացաւ նկատել Մեսրոպ վարդապետի պատրաստականութիւնը, ժողովրդական սկզբունքների կուսակից լինելը և մանաւանդ նրա նուրբ դիւանագիտական շնորհքը։ Այնպէս որ, իր հայրապետութեան հէնց առաջին օրերում հաստատեց իր դիւանի խորհրդի անդամ, նրան վերապահե-

լով և սինոդի անդամութիւնը (այդ ժամանակ Մեսրոպ վարդապետը սինոդի անդամ էր), և կարճ ժամանակից յետոյ, այն է 1909 թվականի նոյեմբերի 25-ին նրան ձեռնադրեց եպիսկոպոս։

Այնուհետև Մեսրոպ եպիսկոպոսը միայնակ մնացած վշտահար հայրապետի մխիթարիչն ու նրա ժողովրդավար սկզբունքների գլխաւոր իրագործողն էր։

III

Դառն ժամանակներ վրայ հասան ծերունի հայրապետի համար։ Աքսորավայրից Պոլսի պատրիարքական գահը բարձրացաւ ազատագրուած թիւրքահայ ժողովրդի միաձայն քւէով. և պատրիարքական աթոռից ընդհանուր հայութեան միահամուռ ցանկութեամբ եկաւ բազմելու ընդհանրական հայրապետի գահի վրայ։ Եւ ծերունի արծիւը ոգևորուած ու լի յոյսերով իր թռիչքն ուղղեց դէպի Էջմիածին։

Սակայն ապերախտ Էջմիածինը, դեռ պարսկական տիրապետութեան օրերից մնացած ինտրիգների այդ կլասիք բունը, հէնց առաջին օրից կտրեց նրա թևերը։ Հին կղերական ոգին նորից գլուխը բարձրացրեց և իր սև դէմքը սկսեց ցոյց տալ, հետզհետէ աւելի ու աւելի յանդգնութեան հասնելով։

Հայրապետի իւրաքանչիւր կարգադրութիւն, որ ժողովրդական սկզբունքներից էր բղխում, անասելի արգելքների սկսեց հանդիպել։ Նորընտիր հայրապետը, որ կրթուած ժողովրդական սկզբունքների դպրոցում և հոգով ժողովրդավար լինելով, դպրոցական, կալուածական, եկեղեցական բոլոր գործերը ցանկանում էր ժողովրդական ներկայացուցիչների ձեռքով կառավարել,

անկարծ մի չտեսնուած դիմադրութեան հանդիպեց կղերամիտ-պահպանողական բանակի կողմից, որ հետզհետէ աւելի ու աւելի էր կազմակերպւում։

Նա ուզում էր իր բոլոր ծրագիրները, մրտածումները Էջմիածնի միաբանութեան, իրեն անմիջական իրաւասութեանը ենթարկւող միաբանութեան միջոցով իրագործել. սակայն նրա ամենամեծ թշնամին հէնց այդ միաբանութիւնը հանդիսացաւ։ Դեռ դիւանը կառավարող խորհրդի ընտրութիւնը հրապարակօրէն, մամուլի մէջ ծաղրւեց և այնուհետև իւրաքանչիւր ընտրական ձև մերժւեց ու հայ եկեղեցու ոգուն խորթ հռչակւեց։ Այդ բանակը զինւեց թեմական խորհուրդների դէմ, առաջնորդական ընտրութիւնների դէմ, մի խօսքով այն բոլոր մարմինների դէմ, որոնք գոյութիւն են ստանում ժողովրդական քւէներով կամ ժողովրդի մասնակցութեամբ։ Հայրապետի դէմ թշնամութիւնը սաստկացաւ, և վանքի պատերից դուրս գալով, ընդարձակ ծաւալ ստացաւ։ Այդ թշնամութիւնը կրկնակի քաջալերութիւն ստացաւ Թիֆլիզից և Պոլսից եկող հին թշնամութիւնից։ Այդ հակառակորդութիւնը, թշնամութիւնը բացարձակ, հրապարակային կերպարանք ստացաւ։ Կղերամիտ մամուլը մի կողմից և մասնաւոր նամակները միւս կողմից սկսեցին հայհոյանքի հուր ու շանթ տեղալ ժողովրդի միաձայն քւէով ընտրուած, պատ-

կառելի անցեալ ունեցող, ազնիւ հայրապետի հասցէին։

Քիչ մարդիկ կային, որոնք կարող էին վշտակիր հայրապետի սկզբունքներին համակիր և նրան անկեղծ բարեկամ լինել։ Դրանք այսօր էլ հրապարակի վրայ են՝ Մեսրոպ և Խորէն եպիսկոպոսներ, Բագրատ վարդապետ և մի երկու միաբան, իսկ հին հոգևորականներից միմիայն Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեան։ Դրանցից Իգմիրլեանի ամենամօտ բարեկամը, ընդհանուր բարեփոխութեան խնդրում նրա ծրագիրներն իրագործողը հանդիսացաւ Մեսրոպ եպիսկոպոսը։ Եւ այսքան քիչ մարդկանցով ծերունի հայրապետը արաւ, ինչ որ կարող էր անել այդ պայմաններում, մինչև իր ողբերգական վախճանը։

Սկիզբն դրւեց մի շարք գեղեցիկ ձեռնարկութիւնների, որոնք դժբախտաբար կիսատ և անորոշ մնացին մինչև օրս։ Դրանցից ամենագլխաւորը դպրոցական կանոնադրութեան հարցն էր, որ անորոշ էր մնացել դպրոցների վերաբացումից և տեղական օրօք կարգւած յանձնաժողովի լուծումից սկսած։

Իգմիրլեանը այդ բանի վրայ ամենից առաջ մտածեց և այդ բանը գլուխ բերելու համար ամենայարմար անձնաւորութիւնը գտաւ յանձին Մեսրոպ եպիսկոպոսի։ Ինչպէս յայտնի է, 1910 թւի մայիսին Իգմիրլեան հայրապետը Մեսրոպ եպիսկոպոսի ուղեկցութեամբ

տեսակցութիւն ունեցաւ Ն. Կ. Մ. Փոխարքայ Կոմս Վարանցով-Դաշկովի հետ և այդ տեսակցութեան ժամանակ փոխադարձ համաձայնութեամբ ուրուագծուեց եկեղեցական ծխական դրպրոցների կանոնադրութեան նախագիծը։ Իզմիրլեանը և Մեսրոպ եպիսկոպոսը ձեռք ձեռքի տուած կարողացան մեր տարիներով վայելած արտօնութիւնների համապատասխան ժողովրդական դրպրոցի կանոնադրութեան նախագիծն իրագործել։ Բայց դժբախտաբար գործն այդպէս էլ մնաց Իզմիրլեանի մահուան պատճառով։ Թեմական խորհուրդների խնդրում ևս ահագին դեր խաղաց Մեսրոպ եպիսկոպոսը իր մի քանի այցելութիւններով Փոխարքային։

Այսպէս ուրեմն, Մեսրոպը լինելով ժամանակակից ազատամիտ հոգևորականութեան ներկայացուցիչը, միաժամանակ Էջմիածնի պաշտօնական ներկայացուցիչն էր հանդիսանում կառավարութեան առաջ, որովհետև ոչ մէկը մեր հոգևորականներից այս վերջին պաշտօնը չէր կարող այնպէս կատարել, ինչպէս Մեսրոպ սրբազանը։

Այս ասպարէզում ցոյց տուած նրա յատկութիւնները ուշադրութեան արժանի են. որովհետև նա այսօր դրուած է կաթողիկոսական ընտրելիների շարքում, իսկ այժմեան հանգամանքներում կաթողիկոսի գլխաւոր արժանիքներից

մէկը համարւում է դիւանագիտական ընդունակութիւնը։

Առանց սողալու իշխանութեան առաջ, առանց իր և իր ժողովրդի արժանապատուութիւնը ոտնահարելու, և պահելով իրեն իր դիրքի ու կոչման բարձրութեան վրայ, Մեսրոպ եպիսկոպոսը կարողացել է համոզիչ տոն ընդունել և իր բոլոր խնդիրներն ու առաջադրութիւնները իրագործել տալ։ Նրա հետ գործ ունեցող պաշտօնեան, լինէր դա մինիստր թէ փոխարքայ, նահանգապետ թէ գաւառապետ, լսել է նրան, ու նրա խնդիրը կատարել, միաժամանակ մի խոր յարգանք տածելով դէպի նրա գիտութիւնն ու անձնաւորութիւնը։ Այս յարգանքը առանձնապէս արտայայտւել է փոխարքայի կողմից յաճախակի տեսակցութիւնների ժամանակ։ Փոխարքայի ամուսին կոմսուհի Վարանցովա-Դաշկովան, որ սաստիկ յարգում էր հանգուցեալ Իզմիրլեանին և նրա համար մի գեղակերտ, թանգարժէք ծխատուփ էր պատրաստել, նրա մահից յետոյ այդ նուէրը տուեց Իզմիրլեանի բարեկամ ու գործակից Մեսրոպ եպիսկոպոսին, որը իր հերթին նմանապէս յարգանք էր ներշնչել կոմսուհու մէջ։

Մօտ 20 տարի տևող այս դիւանագիտական յարաբերութիւնները միանգամայն բաւական են, ցոյց տալու, թէ Մեսրոպ եպիսկոպոսը ինչպիսի

առողջ քաղաքագիտական ընդունակութեամբ է օժտուած։

Մասամբ այսպիսի դիւանագիտութեան և ամբողջապէս քրիստոնէութեան առողջ ըմբռնման հետևանք է նրա այն խօսակցութիւնը Մենշիկովի հետ, որ Մեսրոպ սրբազանի հակառակորդները խեղաթիւրեցին և ծուռ մեկնութիւններով ուղեցին նրան վարկաբեկել։ Մենք աւելորդ չենք համարում այդ խօսակցութեան էութիւնը այստեղ պարզել։ Մեսրոպ եպիսկոպոսը Պետերբուրգում ապրելով և յաճախ այցելելով այդ քաղաքը, բազմաթիւ մարդոց և տարբեր ուղղութեան շատ ներկայացուցիչների հետ ծանօթութիւն է հաստատել։ Դրանց թւում նա ծանօթ է եղել և Մենշիկովի հետ։ Եւ ահա մի անգամ հարց է բարձրանում հայ եկեղեցու մասին։ Ինչպէս յայտնի է, ռուս հասարակութեան նոյնիսկ ազատամիտ մասը թիւր գաղափար ունի հայ եկեղեցու մասին, համարելով մեր եկեղեցին աղանդաւոր, հերձւածող։ Այս կարծիքը բնականօրէն աւելի արմատացած է պահպանողական խաւերում, որոնց տիպիկ ներկայացուցիչներից է Մենշիկովը։ Այս ցաւը, պէտք է ասած, շատ հին է, նոյնիսկ անցեալում մեր բարձր հոգևորականներից մի քանիսը պաշտօնապէս դիմելով կառավարութեանը, խնդրել են նրա ուշադրութիւնը այս հանգամանքի վրայ, այսինքն ազդարարել ռուս հոգևորականութեան, որ

հայ եկեղեցին հերձւածող, աղանդաւոր չէ։

Խօսակցութեան ընթացքում Մենշիկովը կրկնում է այն հին առասպելը, թէ հայ եկեղեցին դուրս է կաթողիկէ եկեղեցիներից, նա իր սկզբունքներով չի մտնում կաթողիկէ, կամ ուղղափառ եկեղեցիներին, լուսաւորչական կրօնը մի աղանդ է քրիստոնէութեան տեսակէտից։ Եւ բնական էր, որ Մեսրոպ եպիսկոպոսը (այն ժամանակ վարդապետ,) իբրև մի հաւատարիմ պաշտօնեայ իր եկեղեցու, աշխատէր թիւրիմացութիւնը պարզել. և նա բացատրում է այդ խնդիրը այնպէս, ինչպէս կը բացատրէր իւրաքանչիւր անկեղծ քրիստոնեայ, մանաւանդ եկեղեցու պաշտօնեայ։ Նա ասում է՝ թէ հայոց եկեղեցին ոչ աղանդաւոր է և ոչ հերձւածող. նա էլ նոյնպիսի առաքելական եկեղեցի է, ինչպէս յունականը և նոյն ծագումը ունի, ինչոր միւս քրիստոնեայ մեծ եկեղեցիները. քրիստոնէութիւնը մէկ է, բոլոր եկեղեցիների համար էլ Քրիստոսը մէկ է եղել, մարդկային տգիտութիւնն է եղել պատճառ, որ պատմական զանազան հանգամանքների ազդեցութեան տակ մի քրիստոնէութիւնից բազմաթիւ քրիստոնէութիւններ է առաջացրել։ Եւ սա այնքան համոզիչ է ու ճշմարտութիւն, որ թւում է թէ ոչ մէկը չպէտք է առարկէր սրան։ Բայց Մեսրոպ եպիսկոպոսի հակառակորդներից ոմանք ուզեցին ցոյց տալ, թէ այս խօսքեր ասողը պատրաստ է հայ

եկեղեցին միացնել ուրիշ եկեղեցու հետ։ Թէ որքան ծիծաղելի է այսպիսի եզրակացութիւն հանելը, ցոյց է տալիս հէնց ինքը Մենշիկովը, որ շատ աւելի խելօք է, քան Մեսրոպի հակառակորդները։ Ինչպէս յայտնի է, Իզմիրլեանի Թաղման ժամանակ Վրաստանի էքզարխը ուղարկել էր յատուկ ներկայացուցիչ։ Եւ ահա այդ առթիւ կատաղած, Մենշիկովը մի անգամ էլ թոյն թափեց հայերի հասցէին։ Նա գրեց «Новое Время»-ի մէջ մօտաւորապէս հետևեալը (դժբաղդաբար այդ №-ը ձեռքի տակ չունենք որ բառացի թարգմանութիւնը տանք).—մենք զարմանում ենք թէ ինչպէս Վրաստանի էքզարխը, ուղղափառ եկեղեցու մի բարձր պաշտօնեան իր կողմից յատուկ ներկայացուցիչ է ուղարկում աղանդաւոր եկեղեցու կաթողիկոսի Թաղմանը ներկայ լինելու համար—և դրան կցում թէև տարիներ առաջ Մեսրոպ եպիսկոպոսը մեզ հետ խօսելիս ասաց, որ հայ և յոյն եկեղեցու մէջ էական տարբերութիւններ չկան, որ հայ եկեղեցին աղանդաւոր չէ, այլ իր ընդհանուր հիմունքներով նոյնն է, ինչ որ ռուս և յոյն եկեղեցին, սակայն մենք այդ եկեղեցին համարում ենք աղանդաւոր. ուստի էքզարխը չպիտի ներկայացուցիչ ուղարկէր հայ կաթողիկոսի Թաղմանը։ Ահա այս պարզ իրողութիւնն է, որ Մեսրոպի թշնամիները ոչ մի արատի մէջ չկարողանալով մեղադրել նրան, մատի փաթաթան են շինել և

անհեթեթ եզրակացութիւններով շահագործում են։ Բայց ժամանակին մամուլի մէջ այդպիսիներին լաւ պատասխան տրւեց. թէ՝ եթէ այդպէս է, եթէ Մեսրոպը եկեղեցիների միութեան կողմնակից է, հապա ինչու «Новое Время»-ն այսպիսի «օգտակար» մարդուն թողած, Օրմանեանի կամ Կարապետի թեկնածութիւնն է պաշտպանում։

Ոչ, սա մի անհեթեթ զրպարտութիւն է, որ գործադրւում է ազէտ մարդկանց մտքերի վրայ ազդեցութիւն անելու համար։ Ընդհակառակը այդպիսի խօսակցութիւնը պատիւ է բերում Մեսրոպ եպիսկոպոսին, ինչպէս և պատիւ կը բերի իւրաքանչիւր լայնախոհ հոգևորականի։

Անցնենք սակայն Մեսրոպ մագիստրոսի գործունէութեան միւս ասպարէզին, որտեղ նա իր գիտնականութեան հետ մի մեծ եռանդ ու գերազոյն տոկունութիւն է ցոյց տալիս։

IV

Գուցէ զարմանալի թւայ, եթէ ասելու լինինք, որ այդ ասպարէզը մատենագրական գործունէութիւնն է։ Եւ իրօք ինչ մատենագրական գործունէութիւն պիտի սպասէր մի մարդուց, որը շարունակ ճանապարհորդութեան մէջ է գտնուել և երբէք մի տեղ նստած չի եղել երկար ժամանակով, որևէ միայուն պաշտօնով։ Ինքը՝ Մեսրոպն էլ, թէ վարդապետ և թէ եպիսկոպոս եղած ժամանակ կարծես «ճանապարհորդելու» մի առանձին հակումն է ցոյց տուել։ Հէնց որ մի թեթև «ազատ» ժամանակ է ունեցել, հէնց որ քիչ թէ շատ երկար ժամանակ պահանջող պաշտօնը վերջացրել է, իսկոյն դիմել է դէպի ճանապարհորդութեան, ինչպէս օրինակ երբ 1906—7 ուսումնական թւին կարգւեց տեսուչ Գէորգեան ճեմարանի, տարին վերջանալուց անմիջապէս յետոյ հրաժարական տալով ուղևորւեց Եւրոպա, շրջելով Պոլիս, Երուսաղէմ, Հռոմ, Պարիզ, Լոնդոն, Օքսֆորդ և Վենետիկ։

Ինչու համար էին այս և սրա նման նախորդ ճանապարհորդութիւնները. արդեօք թափառասիրութեան մի յատկութիւն էր խօսում Մեսրոպ մագիստրոսի մէջ, դրդելով նրան շարունակ այցելել եւրոպական քաղաքները։ Այս

ճանապարհորդութիւնների մէջ մենք տեսնում ենք մագիստրոս վարդապետի և եպիսկոպոսի մի կարևոր նպատակը։ Մատենագրական գործունէութիւնն էր նրա այդ փայփայած նպատակը, որ դրդում էր նրան յաճախակի ձեռք առնել պանդխտութեան ցուպը և Վենետկի ու Երուսաղէմի հնադարանները քրքրել։ Սրա մասին մի քիչ յետոյ, իսկ առայժմ յիշենք նրա գրական աշխատանքները։

Մեսրոպ մագիստրոսը իր առաջին ուսումնական աշխատանքները կատարել է դերմաներէն լեզուով, մի շարք ուսումնասիրութիւններ տալով ժողովրդագրական նիւթերի մասին։ Իսկ ընդհանրապէս հայոց հին գրականութեան վերաբերմամբ ուսումնասիրութիւններ գրել է «Արարատ», «Հանդէս ամսօրեայ» և «Ազգագրական Հանդէս» պարբերականներում։ Ռուսերէն „Археологическій Вѣстникъ" թերթում զետեղել է մի շարք ուշագրաւ յօդուածներ, հնագիտութեան վերաբերող։

Առանձին գրքերով լոյս տեսած նրա աշխատութիւնների մէջ աչքի են ընկնում՝ հայերէն, հին մատենագիրներից—«Սոկրատ», «Բարդամ և Յովասափ», «Սուրբ Մեսրոպի վարք» և այլն։

Ռուսերէն առանձին գրքով հրատարակել է Ս. Գրքի հայերէն թարգմանութեան պատմութիւնը „История перевода Библіи"։

Թարգմանութիւններ արել է ռուսերէնից, գերմաներէնից և անգլիերէնից։ Ռուսերէն թարգմանութիւնների մէջ աչքի են ընկնում գլխաւորապէս պրոֆէսսոր Մարրի յօդուածները։

Գերմաներէնից թարգմանել է բիւզանդական կայսրների պատմութիւնը, որը լինելով պատմութեան համար մի կարևոր երկ, մանաւորապէս հայոց պատմութեան տեսակէտից առանձին արժէք է ներկայացնում։ Անգլիերէնից թարգմանել է Կեօննիբէրի «Դաւիթ անյաղթ»-ի ուսումնասիրութիւնը։ Գրել է մի շարք քննադատական յօդուածներ, եւրոպական և հայոց լեզուներով հրատարակւած հայագիտական աշխատութիւնների մասին։ Այս բոլոր աշխատութիւնները՝ թէ ինքնուրոյն, և թէ թարգմանական, արդէն ընորոշում են Մեսրոպ եպիսկոպոսի մասնագիտութիւնը։

Հնագիտութիւնն է այդ ճիւղը, և մանաւորապէս հայ կեանքն ու գրականութիւնը։ Այդ սէրը դէպի իր ազգի անցեալի հնութիւնները և այդ հնութեանց ուսումնասիրութիւնը, դրդել է Մեսրոպ սրբազանին շարունակ ճանապարհորդել և այցելել հայագիտութեան նիւթեր մատակարարող գրադարանները եւրոպական և ասիական քաղաքներում։ Եւ այդ-սէրն էր պատճառ, որ Մեսրոպ վարդապետին ստիպեց յանձն առնել Էջմիածնի մատենադարանապետի պաշտօնը, որ 1906 թւից սկսած անընդհատ վարում է և նախանձելի վիճակի մէջ է դրել մատենադարանը թէ արտաքուստ և թէ ներքուստ։ Իր անհատական ջանքերով էր, որ Մեսրոպը յաջողեցրեց մատենադարանի համար մի յատուկ շէնք կառուցանել։ Մատենադարանի շինութիւնը գլուխ եկաւ պ. Դաւիթ Աւան-Իւզբաշեանի ծախքով և նստեց մօտ 40 հազար ռուբլի։ Այնուհետև Մեսրոպն զբաղուեց մատենադարանի ներքին բարեկարգութեան խնդրով։

Բայց այս մատենագրական գործունէութիւնն առանձին նշանակութիւն չէր ունենայ և Մեսրոպի անունն այնպէս չէր կապի մեր հին մատենագրական պատմութեան հետ, եթէ չլինէր Մեսրոպի մի ուրիշ աշխատութիւնը։ Այդ թարգմանութիւններն ու հրատարակութիւնները ոչ ժամանակի այն կորուստն են պահանջում և ոչ էլ տոկունութեան այն ահագին աստիճանը, որ երևում է Մեսրոպի մի ուրիշ աշխատութեան մէջ։

Մեսրոպ եպիսկոպոսի գրական ամենամեծ և բազմաթիւ տարիների անդուլ աշխատանք պահանջող գործը հայոց ձեռագրների ցուցակագրութիւնն ու ուսումնասիրութիւնն է։ Այդ աշխատանքը Մեսրոպ եպիսկոպոսն ոկսել է 1898 թւից և անընդհատ շարունակում է մինչև այսօր։ Այդ բազմահատոր աշխատանքը կազմւած է ամենուրեք գտնւող հայ ձեռագիրների ժողովածուներից և հրատարակւած ձեռագրների ցու-

ցակներից։ Եւրոպական և ասիական քաղաքների մատենադարաններում եղած բոլոր ձեռագրների ոչ միայն համեմատական ցուցակն է կազմած, այլև ձեռագրների մէջ եղած տարբերութիւններն է գրած իրար հանդէպ միևնոյն ժամանակի և նոյն անցքերի վերաբերմամբ։ Օրինակ՝ ենթադրենք թէ մէկն ուզում է ուսումնասիրել Հայաստանի վիճակը Մոնղոլական արշաւանքների ժամանակ։ Մեսրոպ եպիսկոպոսի այս աշխատութիւնը ձեռքի տակ ունենալով, նա կարող է իմանալ՝ նախ թէ այդ նիւթին վերաբերող ինչ ձեռագիրներ կան և թէ նրանք որտեղ են գտնւում. Երուսաղէմում արդեօք, թէ Լոնդոնում. և երկրորդ՝ կարող է իմանալ թէ այդ շրջանին վերաբերող պատմագիրները ինչ տարբերութիւն ունին միմեանցից՝ միևնոյն անցքը կամ ժամանակամիջոցը նկարագրելիս։

Այս հսկայական աշխատութիւնը, որի լոկ տպագրութիւնը 20—25 հազար բուբլիով հազիւ գլուխ գայ, կարող էր պատիւ բերել իւրաքանչիւր բանասէրի, ուր մնաց որ այդ բանասէրը Մեսրոպն է։ Իսկ Մեսրոպը, ինչպէս տեսանք, հոգևոր ասպարէզ մտնելու օրից շարունակ զբաղուած է եղել, և մատենագրականից զատ, միւս ասպարէզներում էլ կարևոր գործունէութիւն է ցոյց տուել։

Մեսրոպ մագիստրոսի մատենագրական գործունէութիւնը իր անհերքելի արդիւնքների հետ

մեր առաջ դնում է այդ տոկուն հոգևորականի մի աչքի ընկնող յատկութիւնը և միւս կողմից մի ուսանելի երևոյթ է ասպարէզ հանում։ Մատենագրական ամենախոշոր աշխատութեան գնահատութիւնը թողնելով ապագային, երբ այդ բազմահատոր ձեռագիրը կը տպագրւի և հայ բանասէրների ընդհանուր սեփականութիւն կը դառնայ, այժմ Մեսրոպի մի կարևոր յատկութիւնը շեշտենք, որ այնպէս ցայտուն կերպով երևում է այս աշխատութիւնների հետ ծանօթանալուց յետոյ և որը այնպէս պակասում է մեր այժմեան ոչ միայն հոգևորականութեան, այլև աշխարհիկ մտաւորական շրջաններից։ Այդ՝ Մեսրոպի համեստութիւնն է, իր աշխատութիւնների վերաբերմամբ։ Մինչդեռ մեզանում սովորութիւն է, երկու տող գրելուց յետոյ հռչակել նշանաւոր հրապարակախօս կամ մատենագիր, լրագրների ամբողջ էջեր հեղհեղել յայտարարութիւններով ու ռեկլամներով իրենց աշխատութիւնների մասին, Մեսրոպը մի յամառ համեստութիւն է պահպանել միշտ և երբէք չի աշխատել սրան կամ նրան զարմացնել իր գործերով։ Շատերը մեր բանասէրներից տեսել ու հիացել են նրա այս հոյակապ աշխատութիւններով, շատերը օգտուել են նոյնիսկ դեռ չաւարտած ձեռագրից, սակայն միշտ Մեսրոպի անունը անյայտութեան մէջ է մնացել։

Միւս կողմից այս գործում ուսանելի է

Մեսրոպ եպիսկոպոսի՝ գործունէութեան տենչը։ Այն բոլոր պաշտօններն ու պարտականութիւնները, որ կատարել է քսան տարեայ ընթացքում այս եպիսկոպոսը, եթէ կատարէր մի ուրիշը մեր հոգևորականներից, գուցէ խղճի ամենայն հանգստութեամբ իր մնացած ժամանակը նուիրէր իր հաճոյքին ու անձնական բարեկեցութեանը։

Իր ամբողջ ժամանակը նուիրել հասարակական գործին, պարտականութիւններից դուրս եղած ժամանակն էլ նուիրել գիտութեան ու մատենագրութեան ծառայութեանը, կարող են միայն այն մարդիկ անել, որոնք լցուած են յարատև գործունէութեան մի անկեղծ եռանդով և պորտաբուծութեան սիրահարներ չեն։

Բայց այս մատենագրական գործունէութեան խոշոր նշանակութիւնը այդ չէ։

V

Ծնուած մի հայկական խուլ խրճիթում, սնուած պատմական Սիւնիքի աւանդութիւններով ու ամեն քայլափոխում հանդիպող պատմական յիշատակարաններով, մանուկ Մեսրոպի մատաղ սիրտը կապուած է եղել այդ յիշատակարանների բեկորների հետ. սկզբնական կրթութիւնն ստանալով հայկական եռուն միջավայրում, նրա պատանեկութեան տարիները դարձան կեանքի մի կենդանի դպրոց իր ժողովրդին հիմնականօրէն ծանօթանալու համար։ Այս ծանօթութիւնը, սակայն, շահագործելու համար հարկաւոր էին գիտութեան կուռ զէնքեր, որ Մեսրոպին չէր տալիս հայրենի միջավայրը։ Այդ զէնքերը նա ստացաւ օտար միջավայրում, ռուսական և եւրոպական համալսարաններում։ Եւ այս յետագայի ժամանակամիջոցումն է, որ Մեսրոպը լայնացնում է իր աշխարհահայեացքը, ծանօթանում է օտար կեանքի ու պատմութեան հետ։ Սակայն հիմքը հայրենագիտութիւնն է. օտարը նրա համար նորեկ բան է, և պատուաստւում է այս հայրենական հիմքի վրայ։

Մագիստրոսական աստիճանն ստացած երիտասարդ Մեսրոպը բնական է, որ իր ապագայ

գործունէութիւնն հիմնէր հէնց այդ սկզբնական գանձի վրայ, որ ստացել էր մանկութեան ու պատանեկութեան հասակում։ Օտար մթնոլորտում իւրացրած գիտական զէնքերը այժմ ուղղում են դէպի հայրենի անցեալի ու մտքի մշակութիւնը։ Եւ Մեսրոպը ամփոփում է իր խցի մէջ, կատարելու այն աշխատանքը, որ կողմնակի նայողին զարմանք միայն կարող է պատճառել։ Մօտ քսան տարի թերթել և ուսումնասիրել է Էջմիածնի բազմաթիւ ձեռագիրները, Սեւանի ու Վենետկի, Երուսաղէմի և Լոնդոնի բոլոր յիշատակարանները, որոնք կապ ունին հայ անցեալի, գրականութեան, պատմութեան ու կրօնի հետ։ Այս աշխատանքով Մեսրոպ Մագիստրոսը ձեռք է բերում մի արժանիք, որ պակասում է մեր շատ հոգևորականներից և որ ուրանում են նրա հակառակորդները։ Նրանք ասում են թէ Մեսրոպը ծանօթ չէ հայ եկեղեցական կարգերին ու օրէնքներին, ծիսական հիմունքներին և նոյնիսկ միամտութիւն ունին կարծելու թէ որևէ մէկը, եթէ լինէր Մեսրոպի տեղը, պիտի դուրս գար այդ անհիմն մեղադրանքին պատասխանելու։ Եւ իրօք, կարելի է մէկին մեղադրել Աւետարանի անծանօթութեան մէջ, որը ոչ թէ «մի աւետարան» է կարդացել, այլ հարիւրաւոր ձեռագիր աւետարաններ համեմատելով իրար հետ, նշմարել ու ընդգծել է դրանց մէջ նկատուող ամենաչնչին տարբերու-

թիւնները։ Կարելի է մէկին համարել հայ եկեղեցական կանոնների մէջ ոգէտ, կամ հայ պատմութեանը անծանօթ, քանի որ այդ կանոններն ու պատմութիւնը ամփոփուած են ամենաընդարձակ կերպով հայ ձեռագրների մէջ, դեռ չուսումնասիրուած ու չհրատարակուած յիշատակարանների մէջ, իսկ Մեսրոպ Մագիստրոսը մի պատկառելի ժամանակաշրջան է մաշել այդ ձեռագրների ու յիշատակարանների ուսումնասիրութեան վրայ։

Եւ այդ ուսումնասիրութիւնը կատարել է գիտութեան ու հնագիտութեան վերջին պահանջների համաձայն։

Մեսրոպի այս ձեռագիր աշխատութիւնը իր բոլոր արժանիքների հետ գալիս է մեզ ասելու և այն, որ Մագիստրոս եպիսկոպոսը օժտուած է հայ կեանքի անցեալի ու ներկայի խորին ծանօթութեամբ, իսկ այս յատկութիւնը ևս մի անհրաժեշտութիւն է այն անձի համար, որ կոչւում է հայ եկեղեցու բարձր պաշտօնէութեան։

—

Այսպիսով մենք տեսնում ենք, որ Մեսրոպ եպիսկոպոսը խոշորագոյն չափերով ունի այն յատկութիւնները, որոնք այսօր դրուած են հրապարակ, իբրև արժանիքներ ապագայ հայ կաթողիկոսացուի։ Նախ՝ ժողովրդական սկզբ-

բունքների կողմակից—այս յատկութիւնը պի-
տի առաջին բանը սեպւի մեր այժմեան կաթո-
ղիկոսացուի համար։ Երկրորդ՝ խելօք դիւանա-
գիտութիւն և վարչական ընդունակութիւն—
այս յատկութիւնն ևս առաջնակարգ պահանջ
է, քանի որ վերջին տարիների ռուսահայ պատ-
մութիւնը ցոյց տուեց թէ որքան բան է կախ-
ված դրանից, և թէ որքան են տուժում մեր
եկեղեցին ու կուլտուրական-ազգային հիմնար-
կութիւնները, մեր վարիչ շրջանների վարչա-
կան անանկութիւնից։ Եւ վերջապէս ներկայի
ու անցեալի ծանօթութիւնը։ Իսկ մի մարդ կա-
րող է իր շրջապատը սիրել, եթէ կապված է
այդ շրջապատի հետ խոր ծանօթութեամբ։ Այս
բոլոր յատկութիւնները ի մի հաւաքելով, կը-
տեսնենք որ յանձին Մեսրոպ եպիսկոպոսի,
հայ ժողովուրդը կունենայ մի փորձառու, բայց
տարիների բեռով դեռ չծանրացած հոգևոր ա-
ռաջնորդ։

Այս բոլորի հետ շեշտելի է նաև այն հան-
գամանքը, որ Մեսրոպ եպիսկոպոսը օժտված է
մի բացառիկ անշահախնդրութեամբ։ Այն բոլոր
թերութիւնները, որոնք կապ ունին դրամի ու
շահի հետ և որոնք այնպէս առատօրէն բոլոր-
ւում են այս կամ այն հոգևորականի անուան
շուրջը մեր լրագրութեան մէջ, ամենևին չեն
մօտենում Մեսրոպի անուանը, որովհետև նա
դրամական հաշիւներում ծայրայեղ բծախնդիր

է եղել շարունակ և ինքն էլ սակաւապէտ հո-
գևորական։ Բնաւորութեամբ կորովի և միաժա-
մանակ շրջապատողների հաճոյքին ծառայելու
ախտաւոր յատկութիւնից զերծ։ Այդ է պատ-
ճառը, որ նա իր բարեկամների հետ ունի և
բազմաթիւ հակառակորդներ. սակայն այս հա-
կառակորդներն էլ, որքան նրա վրայ յարձակ-
ւելու լինին, այնուամենայնիւ լցված են մի
գաղտնի յարգանքով դէպի նրա անձնաւորու-
թիւնը։

Այս գիտնական եպիսկոպոսի ներկայու-
թիւնը հայ բարձր հոգևորականների շրջանում
պատիւ է բերում այդ հոգևորականութեանը,
և նոյնքան պատիւ կբերի այդ հոգևորականու-
թեանն ու հայ ժողովրդին, եթէ սրանք իրենց
արժանաւոր գաւակին կանչեն դէպի կաթողի-
կոսական բարձր ու պատասխանատու գահը։
Մեր խորին համոզումով Մեսրոպ Մագիստրոսը
շնորհիւ իր պատրաստականութեան ու աշխար-
հահայեացքի կը կարողանայ մի անջնջելի հետք
թողնել հայ կաթողիկոսների պատմութեան ցան-
կում և, հայ եկեղեցու բարենորոգութեան ու
կուլտուրական հիմնարկութիւնների կանոնա-
ւորութեան մի փայլուն շրջան ստեղծել։

«Ազգային գրադարան»
NL0170280

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.